ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մարտի 2015 թվական N 38–Ա

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 1.433.292 (ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔ ՀԱԶԱՐ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆԵՐԿՈՒ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետին է դիմել Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանը՝ Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմին սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցների գույքահարկի 1.433.292 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանի դիմումը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի փետրվարի 02-ին N 1000 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել արտոնություն Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմին սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցների գույքահարկի՝ 1.433.292 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարման նկատմամբ՝ ազատելով 1.433.292 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (14)		**Դեմ (0)**	**Ձեռնպահ(1)**
Ա. Ադամյան	_____		Ն. Մեսրոպյան _____
Գ. Ադամյան	_____		
Ա. Բաղրամյան	_____		
Մ. Գաբոյան	_____		
Ա.Գրիգորյան	_____		
Վ.Եդիգարյան	_____		

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ռ.Մխիթարյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«25» մարտի 2015 թ.